<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ-ի կարիքների համար
գրենական ապրանքների մատակարարման
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
<<ՏՄՆՊՔ-ԱՊՁԲ-17/02>>

ք. Նոյեմբերյան <<20 >> << 02>> 2017 թ.

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ -ը, ի դեմս տնօրեն Ա.Ղազարյանի, որը գործում է <<Կանոնադրության >> հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Ալլա Ավագյան >> ԱՁ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ավագյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված դիզվառելիք /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 1 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի,

3.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 244300 (Երկու հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, վճարումն կատարվում է կանխավճարային կարգով:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված---------- օրը (առնվազն 365 օրացուցային օրը)[1]:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[2]:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության _2_ օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից _7__օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը[3]:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկան չի հանդիսանում հիմնական միջոց:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե չի մատակարարվում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների տարածքից ապրանք:*

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[4]:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[4] *Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի ա մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

9.5 Եթե Պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) Պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում[5]:

9.6 Եթե Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[6]:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ	<<Ալլա Ավագյան >> ԱՁ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, Ք.Նոյեմբերյան	Ք. Նոյեմբերյան, Բարեկամության 24
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/Ճ	<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/Ճ
Հ/Հ 2476802290660000	Հ/Հ 2476804286760000
ՀՎՀՀ 07400783	ՀՎՀՀ 70420015
ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ <npq2004@yandex.com>	ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ alla-avagyan@bk.ru
Հեռ. (374) 2-35-15	ՀԵՌ.(093)-96-95-45
ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ղազարյան	ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

---

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[6] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Հավելված 1
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնաման առարկայի անվանումը՝ գրենական ապրանքներ

Չափա բաժնի N	Ապրանքը	Տեխնիկական բնութագիրը
1	Թուղթ A4 ֆորմատի 2 /21x29,7/	Թուղթ A4 ֆորմատի:Թուղթ սպառողական ձևաչափերի, չկավիճված, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված խտությունը 80գմ2/, սպիտակությունը ոչ պակաս քան 90% , չափը 210x297մմ փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով , յուրաքանչյուրը 500 թերթ, քաշը 2,5կգ; «Double A» կամ համարժեք: ԳՕՍ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:
2	Գրիչներ ինքնահոս	Գրիչ, պլաստմասե , թափանցիկ իրանով, փոխարինվող միջուկով .ռետինով բռնակով և կափարիչով կապույտ ,սև կամ կարմիր գույների , տարբեր տեսակի, կառուցվածքով մեծ և փոքր չափերի «CELLO FINEGRIP» կամ համարժեք
3	Թուղթ գունավոր A4 ձևաչափի	Հատուկ տպագրելու համար գունավոր թուղթ, A4 (210x297) մմ ձևաչափի, որակյալ .
4	Կավիճ գրատախտակի	Կավիճը նախատեսված է գրելու և նկարելու համար,սպիտակ գլանաձև, քաշը 100գ,տուփի մեջը 12 հատ.
5	Սոսինձ թղթի	Չոր սոսինձ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար
6	Տետրեր	Տետր գծավոր և (կամ) քառակուսի:Օֆսեթային թղթից,12 թերթ, չափերը 148x210 մմ:«SKARLET»կամ համարժեք:
7	Թանաքի բարձիկներ	Բարձիկ դրոշմակնիքի համար, իր տուփով՝ 6.5 x 8.5 սմ չափերի,/տարբեր գույների/: «HORSE» կամ համարժեք:
8	Թանաք, կնիքի բարձիկի	Թանաք կնիքի, բարձիկի համար 30մլտարբեր գույների
9	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	Մետաղական , 3 նիստով, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:
10	Թղթապանակներ	Արագակար՝պլաստիկից, առջևից թափանցիկ, A4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական հարմարանքով:«Flamingo» կամ համարժեք:
11	Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար
12	Թղթապանակ, /ֆայլ/	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ ,Impulse» կամ համարժեք:
13	Մատիտներ	Հասարակ սև կամ գունավոր, համապատասխան կարծրությամբ
14	Կոճգամ պլաստմասե գլխիկով	Գունավոր մեխիկ պլաստմասսայե գլխիկով:
15	Սրիչներ	Սրիչ գրաֆիտե մատիտի համար, սովորական
16	Թղթի ամրակներ	Փոքր , գրասենյակային ամրակներ (սկրեպ) մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33) մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրությամբ միասնական պահելու կարողությամբ:
17	Շտրիխ	Ձնջիչ շտրիխ գրիչատիպ 9 մլ:«Flamingo» կամ համարժեք:
18	Գրասենյակային գիրք	Գրասենյակային գիրք,A4 ձևաչափի (210X297 մմ) ,սպիտակությունը ոչ պակաս քան 70%, խտությունը 45-50գ/ք.մ., 96 թերթ, կոշտ կազմով:

19	Ռետին	Ռետինե ջնջոց փոքր՝ նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար
20	Սեղմակ միջին	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 25 մմ, արդյունավետ ամրեցնում է 60-90 թերթ: «Cosmic» կամ համարժեք:
21	Կարիչի մետաղալարե կապեր	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ :
22	Թուղթ նշումների,սոսնձվածքով	Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25 մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 18510-87 կամ համարժեք, փաթեթավորումը՝ ցանկացած տեսքով
23	Դրոշակներ	Եռագույն , երկարություն 1մետր , լայնություն 2մետր

ԳՆՈՐԴ

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, Ք.Նոյեմբերյան
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի
Հ/Հ 2476802290660000
ՀՎՀՀ 07400783
ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ <npq2004@yandex.com>
Հեռ. (374) 2-35-15
ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Ալլա Ավագյան >> ԱՁ
Ք. Նոյեմբերյան, Բարեկամության 24
<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/Ճ
Հ/Հ 2476804286760000
ՀՎՀՀ 70420015
ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ alla-avagyan@bk.ru
ՀԵՌ.(093)-96-95-45
ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ավագյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
<< 20 >> <<02 >> 2017 թ. կնքված
<<ՏՄՆՊՔ-ԱՊՁԲ-17/02>>
ծածկագրով գնման պայմանագրի

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ-ի կարիքների համար գրենական ապրանքների ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

N	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը (դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				Քանակը	Գինը	Քանակը	Գինը	Քանակը	Գինը	Քանակը	Գինը	Քանակը	Գինը
1	Թուղթ A4 ֆորմատի/21*29.7/	տուփ	2600	10	26000	15	39000	15	39000	15	39000	55	143000
2	Գրիչ գնդիկավոր	հատ	100	10	1000	10	1000	10	1000	10	1000	40	4000
3	Թուղթ գունավոր A4 ձևաչափի	տուփ	20	-	-	100	2000	-	-	100	2000	200	4000
4	Կավիճ գրատախտակի	հատ	300	-		-	-	5	1500	10	3000	15	4500
5	Սոսինձ թղթի	հատ	200	-	-	5	1000	10	2000	10	2000	25	5000
6	Տետրեր	հատ	40	-	-	-	-	50	2000	-	-	50	2000
7	Թանաքի բարձիկներ	հատ	800	-	-	-	-	-	-	1	800	1	800
8	Թանաք, կնիքի բարձիկի համար	հատ	1600	-	-	-	-	-	-	1	1600	1	1600
9	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	տուփ	3900	-	-	-	-	-	-	1	3900	1	3900
10	Թղթապանակներ	հատ	200			-	-	80	16000	-	-	80	16000
11	Թղթապանակ, կոշտ կազմով	տուփ	900	5	4500	-	-	-	-	15	13500	20	18000
12	Թղթապանակ, /ֆայլ/	հատ	500	100	2000	100	2000	100	2000	200	4000	500	10000

13	Մատիտներ	հատ	50	-	-	-	-	-	-	20	1000	20	1000
14	Կոճգամ պլաստմասե գլխիկով	հատ	300	2	600	-	-	-	-	3	900	5	1500
15	Սրիչներ	հատ	200	-	-	-	-	-	-	5	1000	5	1000
16	Թղթի ամրակներ	հատ	200	5	1000	-	-	-	-	5	1000	10	2000
17	Շտրիխ	հատ	250	-	-	5	1250	-	-	15	3750	20	5000
18	Գրասենյակային գիրք	հատ	1500	-	-	2	3000	-	-	1	1500	3	6000
19	Ռետին	հատ	100	5	500	-	-	-	-	5	500	10	1000
20	Սեղմակ միջին	հատ	200	-	-	-	-	-	-	5	1000	5	1000
21	Կարիչի մետաղալարե կապեր	տուփ	150	-	-	10	1500	-	-	10	1500	20	3000
22	Թուղթ նշումների,սոսնձվածքով	տուփ	150	-	-	-	-	10	1500	10	1500	20	3000
23	Դրոշակներ	հատ	3500	-	-	-	-	1	3500	1	3500	2	7000
Ընդամենը				X	35600	X	50750	X	68500	X	85950	X	244300

ԳՆՈՐԴ

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, Ք.Նոյեմբերյան

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/ճ

Հ/Հ 2476802290660000

ՀՎՀՀ 07400783

ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ <npq2004@yandex.com>

Հեռ. (374) 2-35-15

ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Ալլա Ավագյան >> ԱՁ

Ք. Նոյեմբերյան, Բարեկամության 24

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/ճ

Հ/Հ 2476804286760000

ՀՎՀՀ 70420015

ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ alla-avagyan@bk.ru

ՀԵՌ.(093)-96-95-45

ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ավագյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԵՐԵՎԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՍՊԱՌՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ЧАСТНЫЙ ПРЕДПРИНИМАТЕЛЬ АЛЛА АВАГЯН * РА ЕРЕВАН * PRIVATE ENTREPRENEUR ALLA AVAGYAN

ЧЧ.

N 01-Ա 223388

70420015

Հավելված N 3
<<20 >> <<02 >> 2017թ. կնքված
<<ՏՄՆՊՔ-ԱՊՁԲ-17/02>>
ծածկագրով գնման պայմանագրի

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ-ի կարիքների համար գրենական ապրանքների ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Նախատեսվում է ֆինանսավորվել ՀՀ 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												Ընդամենը
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ	Սեպտեմբ	Հոկտեմբեր	Նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Թուղթ A4 ֆորմատի/21*29.7/	-		26000	26000	26000	65000	65000	104000	104000	104000	104000	143000	143000
2	Գրիչ գնդիկավոր	-	-	1000	1000	1000	2000	2000	3000	3000	3000	3000	4000	4000
3	Թուղթ գունավոր A4 ձևաչափի	-	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	2000	4000	4000
4	Կավիճ գրատախտակի	-	-	-	-	-	-	-	1500	1500	1500	1500	4500	4500
5	Սոսինձ թղթի	-	-	-	-	-	1000	1000	3000	3000	3000	3000	5000	5000
6	Տետրեր	-	-	-	-	-	-	-	2000	2000	2000	2000	2000	2000
7	Թանաքի բարձիկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	800	800
8	Թանաք, կնիքի բարձիկի համար	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1600	1600
9	Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3900	3900
10	Թղթապանակներ	-	-				-	-	16000	16000	16000	16000	16000	16000
11	Թղթապանակ, կոշտ կազմով	-	-	4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500	4500	18000	18000
12	Թղթապանակ, /ֆայլ/	-	-	2000	2000	2000	4000	4000	6000	6000	6000	6000	10000	10000
13	Մատիտներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1000	1000
14	Կոճգամ պլաստմասե գլխիկով	-	-	600	600	600	600	600	600	600	600	600	1500	1500
15	Սրիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1000	1000
16	Թղթի ամրակներ	-	-	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	2000	2000

17	Շտրիխ	-	-	-	-	-	1250	1250	1250	1250	1250	1250	5000	5000
18	Գրասենյակային գիրք	-	-	-	-	-	3000	3000	3000	3000	3000	3000	6000	6000
19	Ռետին	-	-	500	500	500	500	500	500	500	500	500	1000	1000
20	Սեղմակ միջին	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1000	1000
21	Կարիչի մետաղալարե կապեր	-	-	-	-	-	1500	1500	1500	1500	1500	1500	3000	3000
22	Թուղթ նշումների,սոսնձվածքով	-	-	-	-	-	-	-	1500	1500	1500	1500	3000	3000
23	Դրոշակներ	-	-	-	-	-	-	-	3500	3500	3500	3500	7000	7000
	Ընդամենը	-	-	35600	35600	35600	86350	86350	154850	154850	154850	154850	244300	**244300**

ԳՆՈՐԴ

<<Նոյեմբերյանի պետական քոլեջ>>ՊՈԱԿ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, Ք.Նոյեմբերյան

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/ճ

Հ/Հ 2476802290660000

ՀՎՀՀ 07400783

ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝ <npq2004@yandex.com>

Հեռ. (374) 2-35-15

ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ղազարյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

<<Ալլա Ավագյան >> ԱՁ

Ք. Նոյեմբերյան, Բարեկամության 24

<<Արդշինբանկ>> ՓԲԸ Նոյեմբերյանի մ/ճ

Հ/Հ 2476804286760000

ՀՎՀՀ 70420015

ԷԼ. ՀԱՍՑԵՆ՝alla-avagyan@bk.ru

ՀԵՌ.(093)-96-95-45

ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա. Ավագյան

/ստորագրություն/

Կ.Տ